բիւր եկեղեցիներով. իսկ ներկայիս՝ սակաւ եկեղեցիներ և սակաւ աւերակներ կան՝ ուրոնք յիշեցընեն անցեալ պայծառութիւնը։

Կը ճոխանայ հեղինակն այս տեղ էջմիածնի վերայ, նորա ճոխ թանգարանին և (Գէորգեան) ճեմարանին վերայ՝ ուր երեքհարիւր հայ պատանիք կ'ուսանին, կ'ըսէ. կը յիշէ գրատունը՝ ուր կը գտնուին գրեթէ ամէն լեզուով գրքեր. կը գովէ ՍՈՂՋԱՄԱՑ մաքրութիւնը և ընդհանուր վանքին և շէնքերուն կարգաւորութիւնը, զոր բաղդատելով Սսոյ հետ՝ անհամեմատ վեր կը գտնէ զայս։ Յատկապէս հիացմամբ կը յիշէ գանձատունը, և այն թանկագին առարկաները՝ որոնք կը պահուին այնտեղ, որոց մէջ կը յիշէ նաև՝ հեգնական ժպիտով մի՝ տապանին այն կտորը, զոր տուեր է հրեշտակն Ս. Յակոբայ մծբնացւոյ. տեսեր է ճոխ ձեռագրատունը, որոյ մասին շատ զովեսմեր կը շռայլէ, և այլն։ Յետոյ բաղդատութիւն մի կ'ընէ եւրոպական պետութեանց ներքև գտնուած հայերուն, թէ ի՛նչ աստիճան զարգացեր են կամ ո՛չ՝ գիտութեանց և արուեստից մէջ, և ի նպաստ ազգերուն կը յորդորէ եւրոպացիքը՝ ի նկատի առնուլ նորա ներկայ և անցեալ հանգամանքները, և այսու կը վերջացընէ իւր յօդուածը։

Հ. Յովհ. Թորոս.

ՄՈՒՐԱՏԵԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
Ի ՊԱԴՈՒԱ

ԵՒ ԲԱՑՈՒՄՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Սկսեալ 1876 ամէն մինչև ներկայ 1896 տարեթիւս՝ Վեհեռակոյ Մուրատ—Ռափայէլեան վարժարանի վարչութիւնն՝ իւր ուսումնասիրտ ընտրելագոյն և քաջուշիմ աշակերտներէն զմանս, ուղարկեր է նաև Պաղուայի իտալական Համալսարանին ուսանից այս ինչ կամ այն ինչ ընթացքը կատարելու, և ընդունելու ուսուցչապետական աստիճան (Dottorato), յօգուտ անձանց և ազգիս միանգամայն։ Քան տարուան փորձերու յաջող արդիւնք, քաջալերեր մատուցին նոյն վարժարանի վարչութեան՝ դեռ աւելի ընդարձակելու այսաւ հետև. իւր գործունէութիւնը. և վերջին տարիներուս մէջ, Մխիթարեան միաբանութեան կեդրոնական վարչութենէն բարեփոխուած ուսումնական նոր ծրագրին համաձայն, նոր կենդանութիւն և զարգացումն տալով նոյն գործին, դիւրացընել համալսարանական ընթացիկ ուսումը՝ նիւթական և բարոյական միջոցներով, որպէս զի կարելի լինի այդ ընթացքին բարեաց հաղորդ ընել բաղմաթիւ աշակերտներ, ինչպէս որ անմահ յիշատակաց վայելող բարերարին Մուրատայ նպաստակն ու փափաքն եղած է։

Այս եռանդեամբ շարժեալ հարկ եղաւ նախ պատրաստել պատշաճաւոր բնակարան և կարևոր եղած իրք և անձինք, կազմելու համար կարգաւորապէս համալսարանական վարժարանի մը համայնքը, ըստ որում ներկայիս մէջ կը գտնուի։ Զանազան գլխոց վերաբերեալ թէ՛ բարոյական և թէ նիւթական պատճառք, առ այժմ աւելի գործադրելի և խոհական ցուցին համալսարանական վարժարանի կատուցման համար առաւելութիւն չնորհել Պաղուայի՝ քան ուրիշ ուսումնական—կեդրոն ծանուցեալ քաղաքաց եւրոպոյ։

Համալսարանական վարժարանս կարող է միանգամայն 15 ուսանողաց բնակարան, ուտեստ և ուսումնական ծախք և գործիք մատակարարել ձրիաբար։

Մինչև ցայսօր Պաղուայի համալսարանին մէջ իրենց մասնագիտութեան ընթացքը աւարտող և ուսուցչապետական աստիճանաւ նշանաւոր հանդիսացած աշակերտք, որք առ ի փորձ յաջողութեան ուղարկուած էին զանազան ժամանակներ, եղեր են հետևեալներն.

Պ. Գէորգ Ազնաւորեան, Կոստանդնուպոլսեցի, ընդունեցաւ աստիճան փաստաբանութեան, յամին 1868։

Պ. Յարութիւն Զէյէպեան, Կոստանդնուպոլսեցի, ընդունեցաւ աստիճան երկրաչափաշարտաբապետութեան, յ' 9 Սեպտեմբերի 1882 տարւոյ։

Պ. Վիկտոր Մարիճեան, Կոստանդնուպոլսեցի, ընդունեցաւ աստիճան Բժշկութեան, ի 18 Յուլիսի 1883 տարւոյ։

digitised by A.R.A.R.@

Պ. Յովսէփ Մինասեան, Եւդոկիացի, ընդունեցաւ աստիճան բժշկութեան, ի 13 Յուլիսի 1885 տարւոյ։

Պ. Թովմաս Թուրմայեան, Կոստանդնուպոլսեցի, ընդունեցաւ աստիճան շարտարապետութեան, ի 16 Յունուարի 1886 տարւոյ։

Պ. Գրիգոր Հաչատեան, Կոստանդնուպոլսեցի, ընդունեցաւ աստիճան ուսուցչապետութեան ի Ցարբարանական Դեղագործութեան, յ'9 Յուլիսի 1888 տարւոյ։

Պ. Երուանդ Արշակեան, Խարբերդցի, ընդունեցաւ աստիճան Բժշկութեան, յ'8 Յուլիսի 1889 տարւոյ։

Պ. Սերովբէ Հիւրմիւզեան, Կոստանդնուպոլսեցի, ընդունեցաւ աստիճան Երկրաչափ-Շարտարապետութեան ի 20 Օգոստոսի 1896 տարւոյ։

Եղան նաև քանի մի ուսանողք համալսարանի, որք առանց մասնագիտութեան ընթացքը աւարտելու յետս դարձուցան։

Դարձեալ Երկրագործութեան և Գինեբանութեան ուսանողք ի Պաղչտիւք (Գաղղիա) և ի Գոնէլիանոյ, յորս մասնաւոր պէտք է յիշել Պ. Յովհաննէս Էմիրզեան, Պրուսացի, (վկայեալ 'ի Գոնէլիան). Պ. Փառնակ Ռափայէլեան, Տրապիզոնցի, (վկայեալ ի Պաղչտիւք)։

Վերոյիշեալ ուսուցչապետներէն ամէնքն ալ, ոմանք իրենց յարատև և անխոնջ Չանից արդիւնքով և այլք իրենց մասնաւորական տաղանդի ձիրքով, քաջափայլ հանդիսացան թէ ամէն մի տարեկան և թէ վերջնական հարցաքննութեանց մէջ, մեծ պատիւ և համակրանք ստանալով օտարաց և ազգայնոց կողմանէ։

Այդ, նոյնպիսի պատուաբեր և շահաւէտ մրցանաց մէջ թեւակոխել փափաքող խումբ մի եռանդուն երիտասարդաց, Վենետկոյ Մուրատ – Ռափայէլեան վարժարանին ուսումնասիրաց աշակերտներէն ութ անձինք, տարւոյս Նոյեմբեր 10ին՝ իրենց հրաժեշտի ողջոյնը տալով նոյն վարժարանին, տեղափոխուեցան Վենետիկ Պաղուա, որոց անունք են,

Պ. Յակոբ Ռշնեան, Կոստանդնուպոլսեցի, (վասն Երկրաչափ – Շարտարապետութեան).

Պ. Արտաշէս Ազարեան, Կոստանդնուպոլսեցի, (վասն Երկրաչափ – Շարտարապետութեան).

Պ. Մկրտիչ Պատմաճեան, Աղրիանուպոլսեցի, (վասն Երկրաչափ – Շարտարապետութեան).

Պ. Աղեքսանդր Ազնաւորեան, Տփղիսեցի, (վասն Երկրաչափ – Շարտարապետութեան).

Պ. Յովհաննէս Մեսգէչեան, Կոստանդնուպոլսեցի, (վասն Բժշկութեան).

Պ. Միքայէլ-Գրիգոր Սափարեան, Տրիզիսեցի, (վասն Երկրաչափ – Շարտարապետութեան).

Պ. Յարութիւն Մինասեան, Կոստանդնուպոլսեցի, (վասն Երկրաչափ – Շարտարապետութեան).

Պ. Տիգրան Մակարեան, Աղեքսանդրուպոլսեցի, (վասն Բժշկութեան)։

Հայ ուսանողաց վերոյիշեալ խումբը տարւոյս Նոյեմբեր 16ին ներկայ էր խուռն բազմութեան հետ՝ Պաղուայի համալսարանին մեծ և շքեղ Aula Magna կոչուած փառաւոր դահլիճին մէջ, որ խիտ և հոծ էր քաղաքային ուսումնական ժողովրդով և այլ և այլ բարձրաստիճան ունկնդիրներով, որոց մէջ էին նաև թէ՛ քաղաքական, թէ՛ զինուորական և թէ՛ ընկերական այլ և այլ վարչական ներկայացուցիչք և պլխաւորք, բազմաթիւ տիկնայք, համալսարանին ուսուցչական խումբն և քանի մի հարիւր ուսանողք։

Հանդիսին բացումն ըրաւ գերազանց բարձրագոյն Պրոֆ. Դէ Ճիովաննի, նորընտիր ընդհանրական վարիչ համալսարանին, որ նոյն պահուն հանդիսապէս ստանձնեց իւր այդ պաշտօնը։ Իւր ներկայացման բանախօսութեան մէջ, յետ համառօտիւ ամփոփելու անցեալ տարւոյն ուսումնական ընթացից տեղեկագիրը, ճարտասանական դարձուածներով յիշեց համալսարանին նոյն տարւոյն մէջ ըրած տխուր կորուստները, մահուամբ երկու համբաւաւոր ուսուցչապետաց, Յովսէփ Դէ Լէվա պատմագիտին և Եռնեստոյ Պաղուա մեքենագիտին, որք հա-

digitised by A.R.A.R.@

մալսարանական կամարին շքեղազոյն զարդերէն էին։

Յետ ծանուցանելու ներկայ տարւոյս մէջ համալսարանի ուսուցչական խմբին կրած փոփոխութիւնները, և յետ իւր արժանաւորութեան մասին նուազութեան համեստ բացատրութիւններ ընելու, այսպէս իւր եռանդուն խօսքերն ուղղեց առ ուսուցիչս. « Ահաւասիկ այս ծանր պաշտօնս, — առ որ ես ինքն հեռամուտ եղած չեմ, բայց զոր այսօր հանձիսապէս կը ստանձնեմ, յարգելով իմ ամենասիրելի կամաւորդաց քուէից օրէնքը, — մեծարանք և պատասխանատուութիւն կ'ազդէ յիս, որը յառաջ կու գան կամաւոր փառահեղ անցելոյն պատմութենէն և ներկայ ժամանակիս զժուարութիւններէն »։ Եւ յետ ցոյց տալու թէ ինչպիսի պարտաւորութեանց ներքև կը գտնուի այսպիսի կամաւորի մը գալուն եղողն և թէ ինչպիսի պարտաւորութեանց ներքև՝ ուսումնասէր երիտասարդութիւնն, որ մէջտեղիս հաւատարիմ պէտք է լինի առ կրօնս պարտուց, վերջացուց իւր խօսքերը, գանալով առ ուսանող երիտասարդս. « Դուք էք յոյս, դուք էք գաղտնիք հանդերձելոյն. բայց որպէս զի այդ յոյսն ի դերև չելնէ, և այդ գաղտնիքն՝ մեր անցելոյն արժանաւոր պարգուի, հարկ է որ օրինաց խստութեան հանգուրժէք, յարատեւէք ծանր ուսմանց մէջ և յաղթէք գիտութեան զժուարութեանց՝ հաստատ դիտաւորութեամբ մնաց առ ի սէր հայրենեաց »։ Մի՝ ձայն և երկար ծափահարութիւնք ի վերջ քանախօսութեան՝ բազմութեան զոհութեան ցոյցեր եղան դէպ ի համակրելի և համբաւաւոր ճառախօսն։

Յետոյ ճառախօսական բեմն ելաւ նաև մեզ հայերուս համակրելի և քաջածանօթ հայերենագէտն Պրոֆ. Եմիլիոյ Տեզա, որ արտասանեց իւր գիտուն և վերիմաստ բացման հանդիսի ճառը, որոյ վերջը յաջորդեցին ծափաձայն երկար զրուատիք։ և յետ կապէս՝ երբ համակրութեամբ յիշեց նաև զհայ ազգը։

Հ. Ա. Տիրոյեան

***

Բազմավիպի խմբագրութիւնս վերոյգրեալ տեղեկութեանց վրայ հաճութեամբ կը յաւելու, որ ուրիշ շրջանաւարտ աշակերտներէն զատ, որք անցան ի Պատուա՝ ի Մուրատեան վարժարան՝ համալսարանական ուսմանց համար, Մուրատ—Ռափայէլեան վարժարանն ևս ի վերեսիկ, ըստ նոր դպրոցական ծրագրին, ունի քաղաքիս մէջ իւր ուսանողքը բարձրագոյն վարժարանաց և արհեստից, յորոց ոմանց անունքը թէպէտ արդէն հրատարակած 1896 տարւոյ Յունիս թերթին մէջ, ներկայիս կը դնենք ամբողջութիւն։

Պ. Անտոն Մահնուշեան, աշակերտ Բ տարւոյ՝ վաճառականութեան բարձր վարժարանի։

Պ. Պետրոս Ոսկեան, աշակերտ Բ տարւոյ ճարտարապետութեան (architecture) վարժարանի։

Պ. Եդուարդ Թէրզեան, աշակերտ նախապատրաստիչ ուսումնարանի ճարտարապետութեան։

Պ. Յովհաննէս Եփրեմեան, աշակերտ Բ տարւոյ մեքենագործութեան վարժարանի։

Պ. Դաւիթ Դաւթեան, աշակերտ Ը տարւոյ (Ջուլթակահար) երաժշտութեան լիկէոնի։

Պ. Անտոն Բարկենդանեան, աշակերտ Գ տարւոյ քանդակագործութեան վարժարանի։

Պ. Անտոն Շենտերեանեան, աշակերտ վիմագրութեան Բ տարւոյ։

Պ. Սեդրաք Կարկառեան, աշակերտ վիմագրութեան Բ տարւոյ։

Պ. Յովհաննէս Իսմայլեան, աշակերտ Բ տարւոյ դարբնութեան վարժարանի։

Պ. Յակոբ Քարակեօզեան, աշակերտ պատուձագործութեան վարժարանի Բ տարւոյ։

Սոքա ամենը ձրիավարժ կ'ուսանին վարժարանէ դուրս, ընակելով ի Մուրատ—Ռափայէլեան վարժարանի և յամենայնի հպատակելով կարգաց և կանոնաց հաւասար լիկէոնական աշակերտաց։

Բաց ի այդ տասանց՝ Մուրատ—Ռափայէլ. վարժարանը ընդունեցաւ յետին չորս ամիսներուս մէջ ուրիշ 40 ևս ձրիավարժ աշակերտներ յարևելից՝ Քաղկեդոնի և Ցրպիզոնի

digitised by A.R.A.R.@

Մխիթարեան վարժարաններէ, յորս ի գաւառաց կամ՝ ի բնիկ տեղացւոց հաւաքուեր էին հրահանգուելու և կամ՝ քննուելու համար պահանջեալ նիւթոց մէջ, որպէս զի արժանաւորքն կարող լինին անցնելու ի Մուրատ–Ռափայլեան լիկէոնը։

Դոցա ի վենետիկ գալստեամբն, Քաղէդոնի և Տրապիզոնի Մխիթարեան վարժարանք նոր ձրիալարժ գիշերօթիկ աշակերտներ ստացան, առաջինն 18 թուով և երկրորդը 15, ի քաղաքացւոց և ի գաւառաց՝ վարժարանական ծրագրին կարգաց համեմատ, և յորոց պիտի ընտրուին՝ տարեկան շրջանին վերջը՝ վենետկոյ լիկէոնը անցնող ձրիալարժ աշակերտք։

ՎԵՍՏԵԱՆ ԿՈՅՍ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՋԻՆ ԴԱՐՈՒ

(Շար. տես. հատ. ԾԴ. էջ 372)

ԳԼՈՒԽ ԺԷ

ԱՆԱԿՆԿԱԼ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՄԻ

Պարիս իսկայն գնաց ինքզինքը սուսերամարտից գլխաւորին վանառելու. յետինս այն պայմանաւ ուզեց գնել զինքը, որ ամիսթէատրոնին վրայ հանէ. և որովհետև այս պայմաններն ընդունելի չէին արիւնահոս սեսարաններու թշնամի եղող քրիստոնէի մը, Պարիս մերժեց զայն։ Յետաբեկ և վհատեալ՝ հեռացաւ իւր հին տիրոջմէն։ Դիպուածով իրեն առջև եկած ճամբուն մէջ մնաւ և դիմեց դէպ ի Էսկուիլին, հեռանալով՝ առանց ուզելու՝ Ցուղդիսլայի ամարանոցէն, ուր Սերբաստոս և Փլորոնիա անհամբերութեամբ իրեն կը սպասէին։ Հազար ու մէկ մտածմունք՝ ամէնն ալ իրարմէ տարօրինակ՝ իւր մտաց մէջէ կը խռնէին, և պահ մի խորհելէ յետոյ՝ կը մերժէր զանոնք իրեն անկարելի բաներ։ Իւր բարեկամներն աղքաս ըլլալով չէին կրնար իրեն օգնել. և սակայն ժամանակն կը սահէր, երկու օր ևս, և ահա գերեզմանական ցուրտ քարը պիտի փակէր իւր զոհը։

Այս մտածութիւնս գրեթէ անոր խելքը գլխէն կը թռցնէր, և մերթենայօրեար առաջ կ'երթար. սակայն ստիպուեցաւ գանգաղելու իւր քայլերը, որպէս զի չի զարնուի իր առջևէն գնացող սինկիլիտոսի մը։ Թերևս քիչ մը սփոփելու համար իրեն նեղութիւններէ վշտացած հոգին, և կամ հնազանդելու համար այն աստուածային նախախնամութեան՝ որ ամենափոքր բաներով նեղ շուղէ մը գացողին առջև մեծ և լայն ճանապարհ մը կը բանայ, նա պատրիկին վրայ աչք մը նետեց։ Վաթսուն տարեկան մարդ մ'էր, միջահասակ, տկար կազմուածքով, որուն գէմքն բարութեան տարօրինակ կնիք մը կը կրէր։ Պարիս վստահութեամբ ետևէն գնաց։

Ուրախութեան արտայայտութիւն մի կ'ուզուրէր ծերունւոյն գէմքը, անոր ընթացքը զանազան էր, և ամէն անգամ որ ճանապարհին վրայ շէնքի մը կը հանդիպէր, կանգ կ'առնուր զայն դիտելու համար՝ իբր թէ առաջին անգամն ըլլար, և կամ հեռաւոր բացակայութենէ մը նոր ետ դարձած լինէր։ Պարիս կը դիտէր անոր ամէն շարժմունքը, բայց մտածելով որ ժամանակը զուր տեղ կ'անցնէր, որոշեց եկած ճանապարհէն ետ դառնալ. բայց հետաքրքրական տեսարան մի կեցուց զայն։

Մի քանի տղայք վազելով յառաջ կու գային, քարի հարուածներով հալածելով իրենց խեղճ հագուած և տարօրինակ տգեղ ընկերներուն մին։ Թշուառ տղին կը փախչէր՝ առանց գիտնալու թէ ո՞ւր ապաւինի. երբ տեսաւ զսինկիլիտոսը, անոր կողմը վազեց և յուսահատութենէն զրկելով անոր ծնկերը, աղաչանաց հայեացք մի բարձրացուց առ նա։

— Ի՞նչ ըրիր իրենց, հարցուց անոր ծերունին։

Տղայն չի պատասխանեց, և ապշած կերպով շարունակեց անոր նայիլ, իբր թէ բան

digitised by A.R.A.R.@